

ՏԵՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

- ✓ 2012թ. մայիսի 2-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույունջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016թթ. Գործողությունների ծրագրի մոնիթորինգի միջգերատեսչական հանձնաժողովի ընդլայնված նիստին,
- ✓ 2012թ. մայիսի 4-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Կայուն օրգանական աղտոտիչների» խորագրով սեմինարին,
- ✓ 2012 թ. մայիսի 22-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան մասնակցել է ք. Երևանում կայացած ՀՄՀ - Հայաստան ծրագրի «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի ազդեցության գնահատման նախնական արդյունքների ներկայացմանը,
- ✓ 2012թ. մայիսի 22-ին և 23-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Թվինինգ, Թայեքս» նախագծերի վերաբերյալ աշխատանքային հանդիպումներին,
- ✓ 2012թ. մայիսի 29-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՀՀ-ԵՄ առևտրի, տնտեսական և համապատասխան իրավական հարցերով համագործակցության ենթակոմիտեի տասնմեկերորդ նիստի հայկական կողմի նախանիստին,
- ✓ 2012թ. մայիսի 30-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՀՀ-ԵՄ առևտրի, տնտեսական և համապատասխան իրավական հարցերով համագործակցության ենթակոմիտեի տասնմեկերորդ նիստի հայկական կողմի նիստին,

- ✓ 2012թ. հունիսի 12-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի վարչության պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ Գ. Նշանյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի իրականացման երրորդ շրջանի ստուգողական սեմինարին,

- ✓ 2012 թ. հունիսի 27-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ.Քալանթարյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան մասնակցել են ք. Երևանում կայացած աշխատաշուկայի և աղքատության պրոֆիլի աշխատանքային սեմինարին: